Հաշվետվությունը
ստանալուց 15 օրվա ընթացքում
Հ. Հակոբյան
11.03.2024 թ.

Փորձաքննության և վերլուծությունների
վարչության գիտական փորձաքննության
բաժնի պետ Նաիրա Նազարյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության գիտական փորձաքննության բաժնի փորձագետի կողմից 10.12.2023 թ. – 11.03.2024 թ. ժամանակահատվածում իրականացվել են Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության գիտական փորձաքննության բաժնի գործառույթներից բխող հետևյալ աշխատանքները.

1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպվում են «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2024»», «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում 2024» և «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» մրցույթները: Մրցույթների շրջանակներում հայտ ներկայացնողներին տրամադրվել է տեղեկատվական խորհրդատվություն, ընդունվել են հայտերի թղթային տարբերակները, ներկայումս կազմակերպվում է մրցույթներին ներկայացված հայտերի գիտական փորձաքննությունը:

2. Համաձայն ՀՀ կառավարության 2024 թ. հունվարի 4-ի N 33-Ն որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման բազային ծրագրերում ներգրավված և առնվազն աշխատաժամանակի նորմալ տևողությամբ աշխատող գիտական աշխատողներին գիտական աստիճանի համար ամենամսյա հավելավճարի տրամադրման չափի և կարգի»՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման բազային ծրագրեր իրականացնող կազմակերպություններից ընդունվել են Կոմիտեի առցանց համակարգի միջոցով ներկայացված՝ գիտական աշխատողների գիտական աստիճանի հավելավճարի վճարման նպատակով ֆինանսական միջոցների տրամադրման հայտերի թղթային տարբերակները: Հայտերում ներառված տվյալների համապատասխանությունը ստուգելուց

հետո յուրաքանչյուր կազմակերպության հետ կնքվել է հավելավճարի վճարման նպատակով ֆինանսական միջոցների տրամադրման հանձնարարության պայմանագիր (2 օրինակ):

3. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հասարակական գիտությունների, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներում հետազոտություններ - 2024» մրցույթին ներկայացված հայտերի և հաշվետվությունների գնահատման նպատակով մասնագիտական փորձագիտական խորհուրդ ձևավորելու մասին պատրաստվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի նախագիծ: Ստուգվել է մրցույթին ներկայացված հայտերի համապատասխանությունը մրցույթի հրավերի պայմաններին: Ստուգման արդյունքները քննարկելու նպատակով տրամադրվել են խորհրդին:

4. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2024/2»» և «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում 2024/2» մրցույթների հայտարարության տեքստը և հրավերը հաստատելու մասին պատրաստվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանների նախագծեր:

5. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծեր 2024» մրցույթին ներկայացված հայտերի և հաշվետվությունների գնահատման նպատակով մասնագիտական փորձագիտական խորհուրդ ձևավորելու մասին պատրաստվել և հաստատման է ուղարկվել ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի նախագիծ:

Փորձաքննության և վերլուծությունների
վարչության գիտական փորձաքննության
բաժնի փորձագետ — Մարինա Տիմոտինա

11.03.2024 թ.